Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ԹԻՎ 156-Ա ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 156-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթին, համաձայն որի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ունենում է նախաբան, որում նշվում է օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր:

Որոշման մեջ բացակայում է հղումը ՀՀ հողային օրենսգրքի դրույթներին: Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի 8-րդ մասի՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի չափը չի կարող պակաս լինել անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափից:

09.07.2021թ.